ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 85/4-Լ «08» 05 2026թ.

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ «ՖԱՐՄԱՑԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԵՂԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 17-րդ կետը, Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի զեկուցագիրը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2026/2027 ուսումնական տարում ԵՊՀ «Ֆարմացիա» մասնագիտության «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցման ձևով 2-րդ փուլի ընդունելության համար հավելյալ պարտադիր պահանջ սահմանել դիմորդի՝ «Ֆարմացիա», «Դեղագործական քիմիա», «Դեղագործություն», «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Քիմիա», «Ֆիզիկա» և «Կենսաբանություն» մասնագիտություններով բակալավրի բազային կրթության առկայությունը:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան